22. ԲԱԳԼՅԱՐ ԹԱՔԱՎԵՐԻՆ ՊՈԶԸ

Իլալ ա, չիլալ մին թաքավեր ա իլալ, անումը Բաղլյար։ Ըտրա կլխեն իլալ ա մին պոզ։ Հինչ դալլաք կյալիս ա ըլալ ըստրա իրեսը, կլոխը վեր ընելիս, էտ դալլաքին կըլոխը կտրել ա իլալ տալիս, մին հոր քցելիս ա իլալ։ Ըտրանց քաղաքումը մընըմ ա լհա մին դալլաք, էն էլ պիրիլ ա տալիս, վեր իրեսը, կլոխը վեր անի։ Վեր վեր ա անըմ, պրծնում, Բաղլյար թաքավերը ասում ա.—Ցրես քու կլոխըտ պիտի կտրեմ։

Էս դալլաքը ասում ա.— Բալա՜մ, խե՜ պիտի իմ կլոխս կտրես։

Ասում ա.— Վախըմ ըմ քեզ պաց թողեմ, ասես, վար իմ կլխիս պոզ կա։

Էս դալլաքը խոսկ ա տալիս, վար վեչ մին տեղ ասիլ չի՜։

Դալլաքը տոն քյնալիս, հղցեն տըեսնում ա, վար էն ա փորը օռչում ա, օզում ա տրաքե, վար էտ թազա խարարը ասե վուչ։ Տեսնում ա մին ճրավեր, սա կռանում ա, էս ճըրըվերըմը իրեք դոնըմ ասում.— Բաղլյարը բաշեն պոզ օնի՜։ Բաղլյարը բաշեն պոզ օնի, — վար փորեն օռուցը քաշըմ ա, ինքյը կյալիս ա տոն։

Էս ճըրըվերան մին ղամիշ ա տուս կյալիս։ Մին օր, մին չորան տեսնում ա, վար էն ա ըտրեղ մին ղամիշ փսած։

Չորանը կյալիս ա էտ ղամիշը կտրում, մին ծվվան շինում։ Սա փչելիս տեսնում ա էս ծվվանն ասում ա.— Բաղլյարին բաշին պոզ կա՜։ Բաղլյարին բաշին պոզ կա՜...

Զորանը էս ծվվանը պերում ա շենումը մարթկանցը, խխոցը հըվաքում, սկսում ծվվան ածելը։

Էս հվաքված մարթիքյ լոխ լսում ըն։

Էտ խաբաարը տարածվում ա, հըսնում ա թաքավերեն։ Սա դաստի կլոխ ա ընդնում, վար սա էն դալլաքին պանեարն ա։

Մին օր էտ դալլաքին կանչում ա, ասըմ.— Պա տու ըսեցեր վեչ, վար վեչ մինին ասել չըս։

Դալլաքը ուրթում ա օտում, վար ինքը վեչ մինին ասալ չի, մին ճըրըվերա կըման։ Թաքավերը չորանին կանչում ա, պերում, ասում.— Խե՞ յըս էս խաբաարը պաց թողալ։

Զորանը ասում ա.—Ինձ վեշ մինը ասալ չի, ճըրըվըերան մին ղամիշ ըմ կըտրալ, ծվվան շինալ, ածելիս տհենց ա ասալ։

Թաքավերը մին էլ ա իրեսը, կլոխը վեր անել տալիս, ետնան դալլաքին նան չորանին կլոխը կտրել ա տալիս։